ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/4.2-3-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. մայիսի 21-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման համար մրցույթին ներկայացվել թվով 4 (չորս) հայտ՝

- «Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի (3,381.6 հազար ՀՀ դրամ),
- «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի (3,000.6 հազար ՀՀ դրամ),
- «Արեգակ Արդար» ՍՊԸ-ի (9,816.0 հազար ՀՀ դրամ),
- «Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի (3,004.0 հազար ՀՀ դրամ) կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 1 (մեկ) կազմակերպության՝

- «Արեգակ Արդար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին:

Մասնավորապես՝

- Հրավերի 2.4 կետի 1-4-րդ կետերով պահանջված փաստաթղթերը կցված չեն, կցված չէ նաև դիմում-հայտարարությունը,
- կցված ծրագիրն ամբողջությամբ չի համապատասխանում Հրավերի 2.4.1 կետով սահմանված պահանջներին:

Թվով 3 (երեք) կազմակերպության՝

- **«Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի,**
- **«Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի,**
- **«Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի**

կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին:

Սակայն նշվեց, որ թվով 2 (երկու) կազմակերպության կողմից ներկայացված հայտերում առկա են որոշակի տեխնիկական խնդիրներ, որոնք չեն կարող համարվել բովանդակային կամ իրավական թերություններ: Ուստի, մրցութային Հանձնաժողովի կողմից առաջարկվեց շտկել դրանք, մասնավորապես՝

- **«Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի կողմից** ներկայացված հայտի ֆինանսական նախահաշվի 2.3 կետով (այցելավայր ժամանած զբոսաշրջիկների շրջանում գոհունակության զեկույցի պատրաստում, ներկայացում շահագրգիռ կողմերին) 40000 դրամ պահանջվող գումարը ոչ նպատակահարմար է, քանի որ կետով սահմանված գործողությունը այն կազմակերպության գործունեության մի մասն է կազմելու: Միևնույն ժամանակ ֆինանսականի նկարագրության մեջ առկա է վրիպակ՝ գործադիր տնօրենի աշխատավարձը նշված է

7 ամիս, սակայն ծրագրի տևողությունը 6 ամիս է, իսկ պահանջվող գումարի հաշվարկը ներկայացված է ճիշտ (6*80000=480000):

• **«Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի** կողմից ներկայացված հայտի՝

- Հրավերի 2.4 կետի 5-րդ ենթակետում՝ Տեղեկատվության տրամադրում մարզի զբոսաշրջության բիզնես ոլորտի շահագրգիռ կողմերի հետ համագործակցության վերաբերյալ (օրինակ՝ կառավարման խորհրդի կազմ, անդամների ցանկ, հուշագիր, պայմանագիր և այլն), բացակայում է ստորագրությունը:

- ֆինանսական նախահաշվի 2.4 կետով՝ **Տավուշի մարզի մասին պատմող լուսանկարներ տողում մ**իավորի քանակը նշված է 100 հատ, իսկ միավորի արժեքը՝ 100 000 ՀՀ դրամ, պահանջվող գումարը նույնպես նշված է 100000 դրամ: Առաջարկվեց դիմել կազմակերպությանը պարզաբանելու վերը նշված անհամապատասխանությունը:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 1 (մեկ) կազմակերպության՝

• «Արեգակ Արդար» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտը:

2. Հաղթող ժանաչել Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 3 (երեք) կազմակերպություն՝

• **«Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ն,**

• **«Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ն,**

• **«Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ն:**

3. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված 1 (մեկ) կազմակերպության՝

• **«Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի** հետ՝ 3,004,000 (երեք միլիոն չորս հազար) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումարի չափով:

4. **Առաջարկել** Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված՝

• **«Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ին՝**

վերանայել ֆինանսական նախահաշվի 2.3 կետով (այցելավայր ժամանած զբոսաշրջիկների շրջանում գոհունակության զեկույցի պատրաստում, ներկայացում շահագրգիռ կողմերին) 40000 դրամ պահանջվող գումարի նպատակահարմարությունը: Միևնույն ժամանակ շտկել ֆինանսականի նկարագրության մեջ առկա վրիպակը՝ գործադիր տնօրենի աշխատավարձը նշված է 7 ամիս, սակայն ծրագրի տևողությունը 6 ամիս է, իսկ պահանջվող գումարի հաշվարկը ներկայացված է ճիշտ (6*80000=480000):

- **«Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ին՝**

- Հրավերի 2.4 կետի 5-րդ ենթակետին համապատասխան ներկայացված տեղեկատվությունը տրամադրել ստորագրությամբ

- շտկել ֆինանսական նախահաշվի 2.4 կետը՝ հաշվի առնելով, որ Տավուշի մարզի մասին պատմող լուսանկարներ տողում միավորի քանակը նշված է 100 հատ, իսկ միավորի արժեքը՝ 100 000 ՀՀ դրամ, պահանջվող գումարը նույնպես նշված է 100000 դրամ:

5. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված 2 (երկու) կազմակերպության՝

- **«Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի,**
- **«Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի հետ** կազմակերպությունների կողմից Հանձնաժողովի առաջարկները ընդունելու և լրամշակված ֆինանսական նախահաշիվը ներկայացնելու դեպքում:

6. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Ս.Հովհաննիսյան - _____

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Լ.Բասմաչյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____